ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 86

## ԹԵՐԵԶԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Թերեզա Մկրտչյանին պատկանող 0,07 հա տնամերձ հողամասը հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Նարեկացու փողոց 1-ին նրբանցք, հողամաս թիվ 6:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 87

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության համայնքների/բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 2-ի թիվ 609-Ն և 2010թ. մարտի 4-ի թիվ 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայքի համայնքի Վայք քաղաքի բնակիչ Արտակ Ղազարյանին պատկանող 700 քմ մակերեսով տնամերձ հողատարածքի այլ հողատարածքի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հողամասի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից.

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*25 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 88

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018Թ. ՄԱՐՏԻ 12-Ի ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 24 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2018թ. մարտի 12-ի <<Ընդունող հանձնաժողով ստեղծելու, կանոնադրությունը հաստատելու, ընդունման հավաքակայաններ ստեղծելու, դրանց կառուցվածքն ու կազմը հաստատելու մասին>> թիվ 24 որոշումը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*25 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 89

## ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԹԵՐԵԶԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերականգնել Վայք քաղաքի բնակչուհի Թերեզա Մկրտչյանի 0,07 հա տնամերձ հողատարածքի հողհատկացման հիմքերը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*25 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 90

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին>> թիվ 1180-Ն որոշումը, և Վայոց Ձորի մարզպետի 2013թ. հուլիսի 15-ի <<Վայոց Ձորի մարզում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 58 որոշումները՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Ստեղծել Վայք համայնքի բնակչության ընդունման հանձնաժողով՝ համաձայն թիվ 1 հավելվածի
2. Հաստատել ընդունման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի
3. Ստեղծել ընդունման հավաքակայաններ և հաստատել հավաքակայանների կառուցվածքն ու կազմը՝ համաձայն թիվ 3 և 4 հավելվածների
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Վայք համայնքի ղեկավարի
2020թ.օգոստոսի 25-ի թիվ 89 որոշման

Համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի կազմը.

1. Հանձնաժողովի նախագահ- համայնքի ՔՊ պետի տեղակալ-Վիգեն Գասպարյան-համայնքի ղեկավարի տեղակալ
2. Կապի և ազդարարման հարցերով պատասխանատու- Խաչիկ Մկրտչյան-աշխատակազմի առաջատար մասնագետ
3. Տրանսպորտի հարցերով պատասխանատու-Արշակ Առաքելյան-աշխատակազմի առաջատար մասնագետ
4. Կենդանիների ընդունման գծով պատասխանատու-Վարդան Սարգսյան-համայնքի անասնաբույժ
5. Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման գծով պատասխանատու –Արամ Հովսեփյան-աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
6. Արին բնակավայրում ընդունման պատասխանատու-Սենիկ Հարությունյան-Արին վարչական ղեկավար
7. Վայք քաղաքում ընդունման պատասխանատու-Ռոման Մկրտչյան-աշխատակազմի գլխավոր մասնագետ
8. Հանձնաժողովի քարտուղար-Գագիկ Մուշկամբարյան-աշխատակազմի քարտուղար

Աշխատակազմի քարտուղար ____________ Գ. Մուշկամբարյան

ՀԱՎԵԼՎԱԾ2
Վայք համայնքի ղեկավարի
2020թ.օգոստոսի 25-ի թիվ 89 որոշման

,,ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ.ԱՎԵՏՅԱՆ

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## I. ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կազմակերպում է տարահանման (ընդունման) հավաքակայանների վարչակազմի նախապատրաստումը:

2. Իրականացնում է հսկողություն ընդունման մարմինների պատրաստականության բերման նկատմամբ:

3. Ճշտում է բնակչության կենսապահովման պլանը, համակողմանի ապահովման միջոցառումները:

4. հսկում է տարահանված բնակչության ընդունման հավաքակայանների նախապատրաստումը ընդունելության համար:

5. Կապ է պահպանում մարզային տարահանման հանձնաժողովի, համայնքի տարածքում գործող օբյեկտների, տարահանվող բնակավայրի հետ:

6.***Բնակչության տարահանման իրականացման վերաբերյալ կարգադրություն ստանալուց հետո՝***

ա. Կազմակերպում է ընդունման հավաքակայանի ծավալումը:

բ. Վերահսկում և կոորդինացնում է համայնքի ընդունման հավաքակայանի, ինչպես նաև ժամանակավոր տեղակայման և երկարատեվ բնակության կետերի աշխատանքը:

գ.Հավաքում է տվյալներ բնակչության ժամանման ու տեղաբաշխման մասին և զեկուցում վերադաս տարահանման հանձնաժողովին:

դ.Համապատասխան ՔՊ մարզային ծառայությունների հետ համատեղ կազմակերպում է ժամանող բնակչության պաշտպանությունը և համակողմանի ապահովումը:

## II. ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ընդունման հանձնաժողովի նախագահը նշանակվում է համայնքի ՔՊ պետի կարգադրությամբ և ենթարկվում է համայնքի ՔՊ պետին ու մարզային.տարահանման հանձնաժողովի պետին:

2. ընդունման հանձնաժողովի նախագահը պատասխանատու է հնարավոր աղետի գոտուց բնակչության կազմակերպված դուրս բերման ուղղությամբ անցկացվող համալիր միջոցառումների, ինչպես նաև տարահանված բնակչության անվտանգ տարածքներում առաջնահերթ կենսաապահովման կազմակերպման համար:

3 ընդունման հանձնաժողովի նախագահը կրում է պատասխանատվություն հանձնաժողովի վրա դրված բոլոր խնդիրների ժամանակին և ողջ ծավալով կատարման համար:

4. հանձնաժողովի նախագահը պարտավոր է՝

1) Իմանալ հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում և ռազմական դրության անցման ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրները,
2) Մասնակցել բնակչության ընդունման հետ կապված հիմնական փաստաթղթերի մշակմանն ու ճշտգրտմանը,
3) Իմանալ տարահանման ենթակա բնակչության թվաքանակը, տարահանման միջոցառումների անցկացման ժամկետները, տարահանման փոխադրումներին ներգրավված ավտոմեքենաների և այլ տրանսպորտային միջոցների քանակը,

4) ընդունման հանձնաժողովի անձնակազմի հետ պարբերաբար անցկացնել մեթոդական պարապմունքներ տարահանման միջոցառումների պլանավորման ու անցկացման հետ կապված ղեկավար փաստաթղթերի ուսուցման ուղղությամբ:

5. **ընդունման *հանձնաժողովի պատրաստականության բերման ժամանակ***

ա. ներկայանալ ՔՊ պետին,

բ. կազմակերպել ընդունման հանձնաժողովի անձնակազմի ազդարարումը և հավաքը սահմանված ժամկետներում,

գ. ճշգրտել ընդունման հանձնաժողովի անձնակազմի աշխատանքային գրաֆիկը և տալ հանձնարարականներ ստորադաս տարահանման մարմիններին պատրաստականության բերելու ուղղությամբ,

դ. կապ հաստատել մարզային և ընդունող բնակավայրի տարահանման հանձնաժողովների, ստորադաս տարահանման մարմինների հետ,

ե.ճշգրտել տրանսպորտային միջոցների հաշվարկները,

զ. ընդունման մարմիններում սահմանել ղեկավար կազմի շուրջօրյա հերթապահություն,

6. **ընդունման *միջոցառումների անցկացման դեպքում***

ա. կազմակերպել ընդունման հանձնաժողովի անդամների հավաք, ճշգրտել նրանց խնդիրները և տալ հանձնարարականներ ենթակա մարմիններին՝ բնակչության ընդունման անցկացման ուղղությամբ,

բ. պատրաստականության բերել բոլոր ընդունման մարմինները և ապահովել նրանց հետ անընդհատ կապ,

գ. կազմակերպել տարահանման ենթակա բնակչության հավաքը, նախապատրաստումը և փոխադրումը անվտանգ տարածքներ,

դ. կազմակերպել բնակչության ընդունման ընթացքի մասին տվյալների հաղորդումը մարզային տարահանման հանձնաժողովին սահմանված ժամկետներում,

զ.կազմակերպել բնակչության առաջնահերթ կենսաապահովումը

## IV. ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ընդունման հանձնաժողովի քարտուղարը ենթարկվում է հանձնաժողովի նախագահին: Նրանց հանձնարարությամբ ընդունման հանձնաժողովի անձնակազմին

և ենթակա տարահանման մարմիններին հասցնում է տեղեկատվություններ, հանձնարարականներ և տարբեր բնույթի հրամաններ:

2. ընդունման հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է՝

ա. իմանալ ընդունման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը և հանձնաժողովի առջև դրված խնդիրները,

բ.իմանալ ենթակա ընդունման մարմինների տեղաբաշխման վայրերը և նրանց ազդարարման կարգը,

գ.մասնակցել ընդունման հանձնաժողովի փաստաթղթերի կազմմանը:

***3. ընդունման հանձնաժողովի պատրաստականության բերման ժամանակ***

ա. ստանալ ընդունման հանձնաժողովի փաստաթղթերը,

բ.ստուգել հանձնաժողովի անդամների հավաքը և զեկուցել նախագահին,

գ.ենթակա ընդունման մարմինների համար պատրաստել ընդունման հանձնաժողովի նախագահի կարգադրությունը,

դ.ստանալ անհատական պաշտպանության միջոցները և բաժանել հանձնաժողովի անդամներին,

ե.ստուգել տարահանման հանձնաժողովի պատրաստականությունը և զեկուցել հանձնաժողովի նախագահի տեղակալին,

զ.ճշգրտել անձնակազմի գործողությունները «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում և հասցնել դրանք հանձնաժողովի անդամներին ու աշխատանքային խմբերի անձնակազմերին,

է.վարել ստացված և տրված հրամանների, կարգադրությունների ու զեկուցագրերի հաշվառման մատյանները:

*4. ընդունման միջոցառումների անցկացման դեպքում*

ա. հսկել ընդունման հանձնաժողովի անձնակազմի հավաքի ընթացքը և զեկուցել հանձնաժողովի նախագահին,

բ.պատրաստել ընդունման հանձնաժողովի նախագահի կարգադրությունը և հասցնել ենթակա ընդունման մարմիններին,

գ.վարել ստացված և տրված հրամանների, կարգադրությունների ու զեկուցագրերի հաշվառման մատյանները,

դ. հավաքել և ընդհանրացնել ենթակա ընդունման մարմինների տվյալները ,ինչպես նաև տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման ընթացքի մասին,

ե.իմանալ ընդունված բնակչության վիճակը, ինչպես են նրանք ապահովվում սննդամթերքով և առաջին անհրաժեշտության իրերով,

զ.իմանալ բոլոր ԵԲՎ-երի հնարավորությունները և պահպանել նրանց հետ անընդհատ կապ,

է.ժամանակին զեկուցել ընդունման հանձնաժողովի նախագահին ստացված ահազանգերի, կարգադրությունների և զեկուցագրերի մասին:

## V. ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՊԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կազմակերպում է բնակչության հաշվառումը և ուղարկումը տեղաբաշխման կետեր:

2. Զեկուցում է ընդունման հանձնաժողովին հաշվառված բնակչության թվաքանակի մասին:

3. Կազմակերպում է հավաքակայանում գտնվող բնակչությանը առաջին բժշկական օգնության ցուցաբերումը:

4. Ապահովում է բնակչության պատսպարումը և հասարակական կարգի պահպանումը:

## VI. ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՊԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Դիմավորում է ժամանող ավտոմոբիլային շարասյուները և ապահովում բնակչության ընդունումն ու հաշվառումը:

2. Կազմակերպում է մարդկանց տեղավորումը ժամանակավոր կացարաններում:

3. Զեկուցում է համայնքային և մարզային հանձնաժողովներին ժամանած ու տեղաբաշխված բնակչության թվաքանակի և ժամանման ժամկետների մասին:

4. Կազմակերպում է բնակչությանը բժշկական օգնության ցուցաբերումը:

5. Ապահովում է բնակչության պատսպարումը և հասարակական կարգի պահպանումը

Աշխատակազմի քարտուղար ____________ Գ. Մուշկամբարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3
Վայք համայնքի ղեկավարի
2020թ.օգոստոսի 25-ի թիվ 90 որոշման

ԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

1. պետ- Ալբերտ Գևորգյան
2. պետի տեղակալ-Վարդան Գևորգյան
3. հերթապահ-Կարինե Արզումանյան
4. հեռախոսավար-Լուսինե Գևորգյան
5. պարետ-Միեր Խաչատրյան
6. ընդունման, հաշվառման և բաշխման խմբի պետ –Սիլվա Հակոբյան

- անդամ-Ալլա Ավագյան
- անդամ-Մերուժան Հարությունյան

7. հասարակական կարգի պահպանման խմբի պետ-Հայկանդուխտ Հակոբյան

- օգնական-Վանուհի Ասատրյան

8. մոր և մանկան սենյակի պետ /բժիշկ կամ բուժքույր/-Սոնա Բադալյան
9. բժշկական կետի պետ /բժիշկ կամ բուժքույր/-Թամարա Հարությունյան

- բուժքույր-Թամարա Հարությունյան
- սանիտար-Աննա Ասատրյան

10. տեղեկատու սեղանի պետ-Սաթենիկ Վարդազարյան

- օգնական- Լուսինե Մինասյան

Աշխատակազմի քարտուղար __________ Գ. Մուշկամբարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 4
Վայք համայնքի ղեկավարի
2020թ.օգոստոսի 25-ի թիվ 90 որոշման

ՎԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

1. պետ- Թառո Հակոբյան
2. պետի տեղակալ-Վարդան Կոստանյան
3. հերթապահ-Կիմա Օհանիսյան
4. հեռախոսավար-Համիկ Գրիգորյան
5. պարետ-Վարդան Հակոբյան
6. ընդունման, հաշվառման և բաշխման խմբի պետ –Անահիտ Մարգարյան

- անդամ-Լևոն Բադալյան
- անդամ-Դավիթ Հակոբյան

7. շարասյուների կազմավորման խմբի պետ-Վարդան Կոստանյան

-պետի տեղակալ-Լևոն Բադալյան

-օգնական-Անուշ Արամյան

-օգնական-Անի Սաղաթելյան

8. հասարակական կարգի պահպանման խմբի պետ-Անահիտ Զաքարյան

- օգնական-Հայկուհի Մարկոսյան

9. մոր և մանկան սենյակի պետ /բժիշկ կամ բուժքույր/-Լիլիթ Բադալյան

10. բժշկական կետի պետ /բժիշկ կամ բուժքույր/-Լիլիթ Բադալյան

- բուժքույր-Այծեմնիկ Հարությունյան
- սանիտար-Տաթև Հովսեփյան

11. տեղեկատու սեղանի պետ-Անահիտ Մարգարյան

- օգնական- Անի Սաղաթելյան

Աշխատակազմի քարտուղար _______ Գ. Մուշկամբարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*31 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 91

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020Թ. ՀՈՒԼԻՍԻ 13-Ի «ՇՈՂԻԿ ԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՇԵՆՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 70 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքի ղեկավարի 2020թ. հուլիսի 13-ի «ՇՈՂԻԿ ԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՇԵՆՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 70 որոշման 1-ին կետում նշված <<որպես բնակելի գործառնական նշանակության>> նախադասությունից հետո ավելացնել << բնակելի տան>> արտահայտությունը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 92

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԼԲԵՐՏԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՎ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Համբարձում Ալբերտի Համբարձումյանի կողմից միավորած Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 6/1/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 06052019-10-0092/ և Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 6 /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2165371/ հասցեների նոր առաջացած շինությունը՝ զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողատարածքով հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Շահումյան փողոց 6/6:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 93

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ՄԱՔՍԻՄԻ ՎԱՀԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ Խճ. 53/71 ՀԱՍՑԵՅԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Քաղաքացի Արման Մաքսիմի Վահանյանին կառուցապատման իրավունքով հատկացված Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 53/71 հասցեի հողատարածքը վերահասցեավորել որպես՝ Վայք համայնք, քաղաք Վայք, Ջերմուկի խճուղի 53/90 հողատարածք:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**     **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 94

## ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՏԱՐՈՆ ԱՐԱՐԱՏԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 300,0 ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2008թ.-ի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Վայք քաղաքի Մայիսյան 11 հասցեում գտնվող 1961 թվականին կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ Տարոն Արարատի Սաֆարյանի/ծնված 15.12.1951թ./սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման առաջին կետում նշված օրինական 500,0 քմ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 300,0 քմ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը համարել այն օգտագործող Տարոն Արարատի Սաֆարյանի սականությունը:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 500,0 քմ և նրան կից ավել օգտագործվող 300,0 քմ սահմանազատված հողամասերը, չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 95

### ԱՐԿԱԴՅԱ ՏԻԳՐԱՆԻ ԱԶԻԶՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,002 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հանգուցյալ Արկադյա Տիգրանի Ազիզյանին պատկանած Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փող. 16 շենքի հարակից տարածքում գտնվող 0,002 հա հողամասը հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Շահումյան փողոց 16/5 հողատարածք:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 96

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԵՎ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և 41-րդ հոդվածի, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշման 9-րդ կետի՝ արտակարգ իրավիճակներից տուժած, տարահանված և Վայք համայնքում տեղաբաշխված բնակչության կենսագործունեությունն ապահովելու նպատակով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի Ջառիթափ համայնքի Նոր Ազնաբերդ, Մարտիրոս բնակավայրերից տարահանված և Վայք համայնքում՝ տեղաբաշխման տեղամասերում բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված պլանը համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետում նշված պլանը ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետի հետ համաձայնեցնելուց հետո:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>
Վայոց ձորի մարզի
Վայք համայնքի
ղեկավար
________Թ.Ավետյան
«__14__»____09____ 2020թ

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության
Վայոց ձորի մարզային փրկարարական
վարչության պետ փ/ծ գնդապետ
__________Հ.Սարգսյան
«__02__»____09____ 2020թ

# Պ Լ Ա Ն

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԻՐՈՍ, ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 96

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԵՎ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և 41-րդ հոդվածի, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշման 9-րդ կետի՝ արտակարգ իրավիճակներից տուժած, տարահանված և Վայք համայնքում տեղաբաշխված բնակչության կենսագործունեությունն ապահովելու նպատակով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի Ջառիթափ համայնքի Նոր Ազնաբերդ, Մարտիրոս բնակավայրերից տարահանված և Վայք համայնքում՝ տեղաբաշխման տեղամասերում բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված պլանը համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետում նշված պլանը ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետի հետ համաձայնեցնելուց հետո

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ        Թ. ԱՎԵՏՅԱՆ

# I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## 1. Պլանի սահմանումը եվ նպատակը

1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջառիթափ համայնքի Մարտիրոս, Նոր Ազնաբերդ բնակավայրերից տարահանված և Վայք համայնքում տեղաբաշխված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանը (այսուհետ՝ Պլան) Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակների դեպքում Մարզի տարածքում տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման գործընթացի իրականացման կարգը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է:

2) Պլանի նպատակը հնարավոր արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության կենսաապահովման գործընթացների արդյունավետ իրականացումն է:

## 2.Պլանի իրավական հիմքերն են.

1) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

2) «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

3) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշում.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշում.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 որոշում.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 679 որոշում.

## II. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**3. Հնարավոր իրավիճակը ռազմական դրության և արտակարգ իրավիճակների առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում տարահանման ենթակա բնակչության թվաքանակը, կազմը, տեղաբաշխման վայրերը և տարահանման ուղիները.**

1) Վայոց ձորի մարզի բնակչության տարահանում կարող է իրականացվել.

ա. ռազմական դրության ժամանակ.

բ. ջրամբարների պատվարների փլուզման վտանգի և առաջացման դեպքում,

գ. ուժեղ երկրաշարժի առաջացման դեպքում:

2) Ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման կամ հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում սահմանամերձ, ինչպես նաև մարտական գործողությունների վարման և զենքի տեսակների անմիջական կիրառման բնակավայրերից և տարածքներից կատարվում է մասնակի տարահանում:

3) Մարզի բնակչության տարահանման միջոցառումները իրականացվում են Մարզի բնակչության տարահանման պլանին համապատասխան:

4) Ռազմական դրության ժամանակ նախատեսվում է բնակչության մասնակի տարահանում իրականացնել սահմանամերձ 10կմ-ոց գոտում գտնվող բնակավայրերից: Ըստ մարզի տարահանման պլանի Ջերմուկ համայնքի Մարտիրոս, Նոր Ազնաբերդ բնակավայրերից տարահանված թվով 303 բնակիչները տեղափոխվում են Վայք համայնք: Զենքի տեսակների կիրառման դեպքում տարահանման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ Մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները և համապատասխան զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

5) տարահանված բնակչության ընդունումը և տեղաբաշխումը իրականացվում է համայնքային ընդունման հանձնաժողովի միջոցով: Վայք համայնքի ղեկավարի 25 օգոստոսի 2020թ.-ի թիվ N90-Ա որոշմամբ ստեղծվել է ընդունման հանձնաժողով, ինչպես

նաև ստեղծվել է ընդունման հավաքակայան և հաստատվել է հավաքակայանի կառուցվածքը, կազմը և կանոնադրությունը:

6) Որպես տարահանման երթուղի օգտագործվում է Մարտիրոս-Զառիթափ-Վայք, Նոր Ազնաբերդ-Խնձորուտ-Զառիթափ-Վայք ճանապարհները:

**4. Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման ռեսուրսներով պահանջարկների բավարարման փաստացի մակարդակը (սեփական ռեսուրսներ, արտադրական հնարավորություններ)**

1) Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովումը կարող է կազմակերպվել ինչպես սեփական, այնպես էլ ներկրվող ռեսուրսների հաշվին:

2) Տարահանված բնակչությունը հացով կապահովվի հացի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների միջոցով: Բացի այդ բնակիչները իրենք կարող են հաց արտադրել իրենց հատկացված ալյուրի չափաբաժիններով:

3) Տարահանված բնակչությանն անհրաժեշտ կաթնամթերքը կարտադրվի ինչպես մարզում գործող կաթի վերամշակման ձեռնարկություններում, այնպես էլ բնակչության կողմից՝ ինքնուրույն:

## III. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԸ

**5. Տեղեկատվության կազմակերպումը**

1) Բնակչության տեղաբաշխման վերաբերյալ տեղեկատվությունը իրավասու մարմիններին և ազգաբնակչությանը տրվում է ընդունման հավաքակայանի տեղեկատու սեղանի կողմից:

**6.Կացարաններով ապահովումը**

1) Տարահանված բնակչության կացարաններով ապահովման համար օգտագործվում են համայնքի բնակելի տները:

2) Ընդունման հավաքակայանում հաշվառվելուց հետո բնակչությունը տեղաբաշխվում է տեղի բնակչության բնակարաններում:

**7. Կենցաղ-տնտեսական ապահովումը**

1) Կենցաղ-տնտեսական ապահովումը տարահանված բնակչության ջեռուցման, լուսավորման, տարածքների սանիտարական մաքրման, բաղնիքլվացքարանային, հուղարկավորության ծառայություններով ապահովումն է, որը կազմակերպվում է համայնքի կողմից՝ քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների օժանդակությամբ:

2) Կենսաապահովման գործընթացի միջոցառումների իրականացման ժամանակ օգտագործվում են համայնքի ուժերն ու միջոցները:

**8. Ջրամատակարարումը**

1) Ջրամատակարարումը տարահանված բնակչության կենսաապահովման կարևորագույն բաղկացուցիչ մասն է:

2) Համայնքը ապահովված է ինքնահոս ջրամատակարարման ստացիոնար համակարգերով:

3) Արտակարգ իրավիճակների հետևանքով կամ ռազմական դրության ժամանակ համայնքի ջրագծերի շարքից դուրս գալու դեպքում բնակչությանը ջուր կարող է մատակարարվել նաև տրանսպորտային միջոցներով:Մեկ մարդու համար օրական ջրի քանակը պետք է լինի 30 լիտրից ոչ պակաս, 250 մարդուն պետք է ապահովի ջրամատակարարման մեկ կետ, բնակելի շինությունների և ջրամատակարարման կետի առավելագույն հեռավորությունը չպետք է գերազանցի 500 մետրը:

**9. Բժշկական ապահովումը**

1) Տարահանման միջոցառումների բժշկական ապահովումն իրականացվում է ՔՊ բժշկական մարզային ծառայության կողմից, ինչպես նաև համայնքի բուժ կետի միջոցով:

2) Սանիտարական և հատուկ մշակման, ինչպես նաև հակահամաճարակային միջոցառումները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Վայոց ձորի մարզային կենտրոնը և <<Առողջապահական պետական տեսչության Վայոց ձորի մարզային փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ը:

**10. Սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումը**

1) Սննդամթերային և նյութատեխնիկական ապահովման հիմնական խնդիրներն են՝

ա. տարահանված բնակչությանը սննդով, պարենով, ջրով, հանդերձանքով և հագուստով, գույք-սարքավորումներով, սպիտակեղենով, կոշկեղենով և այլ նյութական միջոցներով ապահովումը.

բ. բնակչության ապահովումը անհատական պաշտպանության միջոցներով, այդ թվում նաև պաշտպանության պարզագույն միջոցներով.

2) Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում սննդամթերային և նյութատեխնիկական ապահովման համար պատասխանատու են մարզպետարանը և համայնքապետարանը:

3) Սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է առևտրի սննդի ու նյութատեխնիկական մատակարարման մարզային ծառայությունները տարահանվող և ընդունող բնակավայրերի հիմքի վրա ստեղծված սննդի շարժական կետերի, սննդամթերքի մատակարարման շարժական կետերի և իրային մատակարարման շարժական կետերի միջոցով:

4) Սննդամթերային և նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) կողմից արտադրված կամ դրանց տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական պահուստի միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրած մարդասիրական օգնությունը:

5) Ռազմական դրության ժամանակ տարահանված բնակչությանը անհրաժեշտ սննդամթերքով, հագուստով, կոշկեղենով և այլ առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովումը վերապահված է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

6) Սննդամթերային և նյութական միջոցների տեղափոխումը տարահանված բնակչության տեղաբաշխման վայր իրականացվում է համայնքներում առկա տրանսպորտային միջոցներով: Չբավարարող տրանսպորտային միջոցները կտրամադրվեն տրանսպորտային մարզային ծառայության կողմից:

**11.Կրթության ապահովումը**

1) Կրթության ապահովումը կազմակերպում է մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը՝ համայնքի դպրոցի միջոցով:

2) Տուժած բնակչության կրթության կազմակերպման համար օգտագործվում են դպրոցի շենքը:

**12.Սոցիալական ապահովումը**

Սոցիալական ապահովումը համայնքում տեղաբաշխված բնակչության համար կազմակերպում է համայնքապետարանը և սոցիալական ծառայության կենտրոնը:

**13.Զբաղվածության ապահովումը**

համայնքում տեղաբաշխված բնակչության համար զբաղվածության ապահովումը կազմակերպում են մարզպետարանը և համայնքապետարանը:

**14.Տրանսպորտային ապահովումը**

1) Տարահանված բնակչության կենսաապահովման նպատակով տարահանվող և ընդունող համայնքներում ստեղծված քաղաքացիական պաշտպանության կազմավորումներից յուրաքանչյուրին ամրակցվում են 1-ական բեռնատար ավտոմեքենա և կցասայլակ:

2) Տարահանվող համայնքներում ստեղծված իրային մատակարարման շարժական կետերին ամրակցված տրանսպորտային միջոցները տարահանվող բնակչության հետ տեղափոխվում են ընդունող բնակավայրեր:

3) Տարահանված բնակչության կենսաապահովման նպատակով անհրաժեշտ լրացուցիչ տրանսպորտային միջոցները տրամադրում է տրանսպորտային մարզային ծառայությունը:

## IV. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՇԽՈՒՄ

**15. Հավանական մարդասիրական օգնության ստացման վայրերը, ստացող պատասխանատուն, պահեստավորման վայրը, տուժած բնակչությանը մարդասիրական օգնության բաշխման պատասխանատու մարմինը, ուժերը, միջոցները, տրանսպորտը և այլն**

1) Մարդասիրական օգնությունը տրամադրում է արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովը՝ տուժած տարածքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

2) Միջազգային մարդասիրական օգնությունը ցուցաբերվում է միջազգային կազմակերպությունների, առանձին պետությունների և անհատների կողմից:

3) Միջազգային մարդասիրական օգնությունը կարող է լինել հրատապ միանվագ օգնության կամ երկարաժամկետ ծրագրային ձևով:

## V. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

16.Տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ընթացքում փոխգործողություններ են իրականացվում ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության, ՔՊ մարզային ծառայությունների և համայնքապետարանի միջև:

17. Փոխգործողություններն իրականացվում են ստեղծված իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության միմյանց փոխանցմամբ և յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ:

## VI. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

18. ՀՀ տարածքում բնակչության կենսաապահովմանն ուղղված որոշումներն արտակարգ իրավիճակներում ընդունում է ՀՀ արտակարգ իրավիճակների պետական հանձնաժողովը, իսկ ռազմական դրության ժամանակ՝ բնակչության տարահանման հանրապետական հանձնաժողովը:

19,Կենսաապահովման միջոցառումները համայնքում իրականացնում է համայնքային տարահանման հանձնաժողովը:

20. ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունը վերահսկում և կանոնակարգում է բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման գործընթացը

21. Կապը բնակչության կենսաապահովման միջոցառումներն իրականացնող մարմինների միջև իրականացվում է ֆիքսված և բջջային հեռախոսակապի միջոցով, իսկ դրանց խափանման դեպքում՝ սուրհանդակների միջոցով:

Հավելված 1

# ՀԱՇՎԱՐԿ

Սահմանամերձ Նոր Ազնաբերդ և Մարտիրոս բնակավայրերից բնակչության մասնակի տարահանման

| Հ/Հ | Տարահանման ենթակա բնակավայրի անվանումը | Բնակչության ընդհանուր թիվը | Տարահանվող բնակչության ընդհանուր թիվը | Տարահանվող ընտանիքների թիվը | Տարահանման ենթակա բնակչության թիվը | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Մինչև 16տ. Երեխաներ | Հղի, մինչև 8տ. երեխա ունեցող կանայք | 8-16տ. Երեխա ունեցող կանայք, որոնց ընտանիքում չկան այլ չափահաս տարահանվողներ | Կենսաթոշակառուներ | Հաշմանդամներ |
| 1. | Նոր Ազնաբերդ | 104 | 60 | 17 | 20 | 7 | 7 | 11 | 6 |
| 2. | Մարտիրոս | 597 | 243 | 88 | 102 | 34 | 19 | 47 | 10 |

Համայնքի ՔՊ շտաբի պետ Գ.Մուշկամբարյան

Հավելված 2

## ՀԱՇՎԱՐԿ

Բնակչության մասնակի տարահանման և տեղաբաշխման

| Տարահանման ենթակա բնակավայրերը | | | | Շարժման երթուղին | Երթուղու երկարությունը կմ | Ընդունող բնակավայրը | | | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բնակավայրի անվանումը | Բնակչության թվաքանակը | | | | | Անվանումը | Բնակչության թվաքանակը | Տեղաբաշխման համար նախատեսված առանձնատների քանակը | |
| | ընդամենը | այդ թվում ենթակա է տարահանման | Տարահանվող ընտանիքների թիվը | | | | | | |
| Մարտիրոս | 597 | 243 | 88 | Մարտիրոս-Վայք | 20 | Վայք | 7496 | 87 | |
| Նոր Ազնաբերդ | 104 | 60 | 17 | Նոր Ազնաբերդ-Վայք-Արին | 34 | Արին | 324 | 17 | |

Համայնքի ՔՊ շտաբի պետ Գ.Մուշկամբարյան

Հավելված 3

**ՀԱՇՎԱՐԿ**
Տեղաբաշխման վայրերում մասնակի տարահանված
չափահաս բնակչությանը հատկացվող սննդամթերքի

| ՀՀ ը/կ | Ապրանքի անվանումը | Չափահաս 141 բնակչության | |
|---|---|---|---|
| | | չափաքանակ (կգ/մարդ/օր) | բնակչության համար 10 օրվա հաշվարկ (կգ) |
| 1 | Թեփահանված աշորայի և ցորենի առաջին տեսակի ալյուրի խարնուրդից հաց | 0.250 | 352.5 |
| 2 | Ցորենի առաջին տեսակի ալյուրից սպիտակ հաց | 0.250 | 352.5 |
| 3 | Ձավարեղեն (բրինձ երկարավուն) | 0.06 | 84.6 |
| 4 | Մակարոնեղեն (տեղական) | 0.02 | 28.2 |
| 5 | Կաթ | 0.2 | 28.2 |
| 6 | Մսի պահածո | 0.06 | 84.6 |
| 7 | Ձկան պահածո | 0.025 | 35.25 |
| 8 | Կարագ | 0.03 | 42.3 |
| 9 | Շաքար | 0.04 | 56.4 |
| 10 | Կարտոֆիլ | 0.3 | 423 |
| 11 | Բանջարեղեն | 0.12 | 169.2 |
| 12 | Կերակրի աղ (յոդացված) | 0.015 | 21.15 |
| 13 | Թեյ | 0.001 | 1.41 |
| 14 | Պանիր | 0.02 | 28.2 |
| 15 | Ջուր | 7.5 | 10575 |

Համայնքի ՔՊ շտաբի պետ Գ.Մուշկամբարյան

# ՀԱՇՎԱՐԿ

Մասնակի տարահանված անչափահաս բնակչության տեղաբաշխման վայրերում հատկացվող սննդամթերքի

| ՀՀ ը/կ | Սննդամթերքի անվանումը | Մինչև-17 տարեկան 130 մարդ | | Ընդամենը- |
|---|---|---|---|---|
| | | երեխայի չափաքանակը (կգ/մարդ/օր) | երեխայի համար 10 օրվա հաշվարկը | |
| 1 | Ցորեն, հաց | 0.5 | 650 | 650 |
| 2 | Ձավարաղեն մակարոնեղեն | 0.06 | 78 | 78 |
| 3 | Վարսակի փաթիլներ <<Հերկուլես>> | 0.056 | 72.8 | 72.8 |
| 4 | Կարտոֆիլ | 0.3 | 390 | 390 |
| 5 | Բանջարեղեն | 0.12 | 156 | 156 |
| 6 | Մրգային պյուրե | 0.25 | 325 | 325 |
| 7 | Շաքար | 0.04 | 52 | 52 |
| 8 | Ձուկ, ձկնամթերք | 0.025 | 32.5 | 32,5 |
| 9 | Կարագ | 0.067 | 87.1 | 87,1 |
| 10 | Միս, մսամթերք | 0.06 | 78 | 78 |
| 11 | Կաթ, կաթնամթերք | 0.2 | 260 | 260 |
| 12 | Ձու | 0.1 | 130 | 130 |
| 13 | Կերակրի աղ (յոդացված) | 0.015 | 19.5 | 19,5 |
| 14 | Թեյ | 0.002 | 2.6 | 2,6 |
| 15 | Պանիր | 0.02 | 26 | 26 |
| 16 | Ջուր լիտր(մարդ) օր | 2.5 | 8450 | 8450 |

Համայնքի ՔՊ շտաբի պետ Գ.Մուշկամբարյան

Հավելված 5

# ՀԱՇՎԱՐԿ

Մասնակի տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում հատկացվող հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Չափա-քանակ | 303 բնակչի համար |
|---|---|---|---|---|
| 1 | Հագուստ(կոշիկ) | հատ (զույգ) | 1 | 303 |
| 2 | Միանգամյա օգտագործման սպասք | լրակազմ/մարդ | 5 | 1515 |
| 3 | Խորը թաս | հատ/մարդ | 1 | 303 |
| 4 | Գդալ | հատ/մարդ | 1 | 303 |
| 5 | Բաժակ | հատ/մարդ | 1 | 303 |
| 6 | Դույլ | հատ/մարդ | 0.2 | 60.6 |
| 7 | Մետաղյա թեյնիկ | հատ/մարդ | 0.1 | 30.3 |
| 8 | Խմելու ջրի /տարողություն/ (10լիտրանոց) | հատ/մարդ | 0.25 | 75.75 |
| 9 | Օճառ | գր/մարդ | 0.2 | 60.6 |
| 10 | Լվացքի միջոցներ | գր/մարդ | 0.5 | 151.5 |
| 11 | Անկողնային պարագաներ | լրակազմ/մարդ | 1 | 303 |
| 12 | Լուցկի | տուփ/մարդ/օր | 0.5 | 151.5 |
| 13 | Մոմ | հատ/մարդ/օր | 0.25 | 75.75 |
| 14 | Վերմակ բամբակյա | հատ/մարդ | 1 | 303 |
| 15 | Սրբիչ | հատ/մարդ | 1 | 303 |

Համայնքի ՔՊ շտաբի պետ Գ.Մուշկամբարյան

# ՏՎՅԱԼՆԵՐ

Մասնակի տարահանված բնակչության ժամանակավոր տեղաբաշխման կետերի վերաբերյալ

| Հ/Հ | Տարահանված ընտանիքի անդամների թվաքանակը | Տեղաբաշխման համար նախատեսված առանձնատների քանակը | Տեղաբաշխման համար նախատեսված առանձնատան հասցեն |
|---|---|---|---|
| 1 | Նոր Աշնաբերդ-60 | 17 առանձնատուն | Վայք համայնք, գ. Արին սեփական բնակելի տներ |
| 2 | Մարտիրոս-193 | 87 առանձնատուն | Վայք համայնք, ք. Վայք, սեփական բնակելի տներ |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Համայնքի ՔՊ շտաբի պետ Գ.Մուշկամբարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք 3801, Շահումյան 18
Vayk 3801 Shahumyan 18
Հեռ. 077112894
Էլ. փոստ vayktown@mail.ru

*25 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 90

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին>> թիվ 1180-Ն որոշումը, և Վայոց Ձորի մարզպետի 2013թ. հուլիսի 15-ի <<Վայոց Ձորի մարզում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 58 որոշումները՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Ստեղծել Վայք համայնքի բնակչության ընդունման հանձնաժողով՝ համաձայն թիվ 1 հավելվածի
2. Հաստատել ընդունման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի
3. Ստեղծել ընդունման հավաքակայաններ և հաստատել հավաքակայանների կառուցվածքն ու կազմը՝ համաձայն թիվ 3 և 4 հավելվածների
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Վայք համայնքի ղեկավարի
2020թ.օգոստոսի 25-ի թիվ 89 որոշման

Համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի կազմը.

1. Հանձնաժողովի նախագահ- համայնքի ՔՊ պետի տեղակալ-Վիգեն Գասպարյան-համայնքի ղեկավարի տեղակալ
2. Կապի և ազդարարման հարցերով պատասխանատու- Խաչիկ Մկրտչյան-աշխատակազմի առաջատար մասնագետ
3. Տրանսպորտի հարցերով պատասխանատու Արշակ Առաքելյան-աշխատակազմի առաջատար մասնագետ
4. Կենդանիների ընդունման գծով պատասխանատու-Վարդան Սարգսյան-համայնքի անասնաբույժ
5. Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման գծով պատասխանատու -Արամ Հովսեփյան-աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
6. Արին բնակավայրում ընդունման պատասխանատու-Սենիկ Հարությունյան-Արին վարչական ղեկավար
7. Վայք քաղաքում ընդունման պատասխանատու-Ռոման Մկրտչյան-աշխատակազմի գլխավոր մասնագետ
8. Հանձնաժողովի քարտուղար-Գագիկ Մուշկամբարյան-աշխատակազմի քարտուղար

Աշխատակազմի քարտուղար ______________ Գ. Մուշկամբարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 4
Վայք համայնքի ղեկավարի
2020թ.օգոստոսի 25-ի թիվ 90 որոշման

ՎԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

1. պետ- Թառո Հակոբյան
2. պետի տեղակալ-Վարդան Կոստանյան
3. հերթապահ-Կիմա Օհանիսյան
4. հեռախոսավար-Համիկ Գրիգորյան
5. պարետ-Վարդան Հակոբյան
6. ընդունման, հաշվառման և բաշխման խմբի պետ -Անահիտ Մարգարյան

- անդամ Լևոն Բադալյան
- անդամ-Դավիթ Հակոբյան

7. շարասյուների կազմավորման խմբի պետ-Վարդան Կոստանյան

-պետի տեղակալ-Լևոն Բադալյան

-օգնական-Անուշ Արամյան

-օգնական-Անի Սաղաթելյան

8. հասարակական կարգի պահպանման խմբի պետ-Անահիտ Զաքարյան

- օգնական-Հայկուհի Մարկոսյան

9. մոր և մանկան սենյակի պետ /բժիշկ կամ բուժքույր/-Լիլիթ Բադալյան

10. բժշկական կետի պետ /բժիշկ կամ բուժքույր/-Լիլիթ Բադալյան

- բուժքույր-Այծեմնիկ Հարությունյան
- սանիտար-Տաթև Հովսեփյան

11. տեղեկատու սեղանի պետ-Անահիտ Մարգարյան

- օգնական- Անի Սաղաթելյան

Աշխատակազմի քարտուղար՝ ____ Գ. Մուշկամբարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3
Վայք համայնքի ղեկավարի
2020թ.օգոստոսի 25-ի թիվ 90 որոշման

ԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

1. պետ- Ալբերտ Գևորգյան
2. պետի տեղակալ-Վարդան Գևորգյան
3. հերթապահ-Կարինե Արզումանյան
4. հեռախոսավար-Լուսինե Գևորգյան
5. պարետ-Միեր Խաչատրյան
6. ընդունման, հաշվառման և բաշխման խմբի պետ -Սիլվա Հակոբյան

- անդամ-Ալլա Ավագյան
- անդամ-Մերուժան Հարությունյան

7. հասարակական կարգի պահպանման խմբի պետ-Հայկանդուխտ Հակոբյան
- օգնական-Վանուհի Ասատրյան

8. մոր և մանկան սենյակի պետ /բժիշկ կամ բուժքույր/-Սոնա Բաղալյան

9. բժշկական կետի պետ /բժիշկ կամ բուժքույր/-Թամարա Հարությունյան
- բուժքույր-Թամարա Հարությունյան
- սանիտար-Աննա Ասատրյան

10. տեղեկատու սեղանի պետ-Սաթենիկ Վարդապարյան
- օգնական- Լուսինե Մինասյան

Աշխատակազմի քարտուղար՝ _______ Գ. Մուշկամբարյան

ՀԱՎԵԼՎԱԾ2
Վայք համայնքի ղեկավարի
2020թ.օգոստոսի 25-ի թիվ 89 որոշման

,,ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ,,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ.ԱՎԵՏՅԱՆ

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## I. ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կազմակերպում է տարահանման (ընդունման) հավաքակայանների վարչակազմի նախապատրաստումը:

2. Իրականացնում է հսկողություն ընդունման մարմինների պատրաստականության բերման նկատմամբ:

